Հավելված N 2
ՀՀ կառավարության 2019 թվականի
հոկտեմբերի 10-ի N 1441 - Լ որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2019-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

**Նպատակ 2. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրական ժողովրդավարության հաստատում և իրավունքի գերակայության ամրապնդում**

**Ռազմավարական ուղղություն՝** Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին օրենքի նախագծի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում և ներկայացում ԱԺ

**Գործողություն 1.** «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում

**Գործողություն 1-ի արդյունք.** «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթը) ներկայացվել է ԱԺ և պարունակում է սույն ռազմավարությամբ մատնանշված կարգավորումները

| Գործողություն | Պատասխանատու մարմին | Ելակետային դրություն | Թիրախն ըստ փուլերի | | Ստուգման միջոց | Ակնկալվող արդյունք | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2019 թվականի 2-րդ կիսամյակ | 2020 թվական | | | |
| «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագծի | ՀՀ արդարադատության նախարարություն | Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման շրջանակներում Փաստահավաք հանձնաժողովի գործունեության արդյունավետության ապահովման թիվ մեկ | «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների | «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների | «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը | «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը (անհրաժեշտու | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթի) մշակում: | | նախապայմանը դրա կազմավորման կարգի և մանդատի վերաբերյալ հստակ և բոլոր շահերի ու ռիսկերի գնահատմամբ մշակված կարգավորման առկայությունն է: | նախագծերի փաթեթը) մշակվել է | նախագծերի փաթեթը) քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել Կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | (անհրաժեշտության դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթը) ներկայացվել է ՀՀ ԱԺ: | թյան դեպքում՝ օրենքների նախագծերի փաթեթը) ներկայացվել է ՀՀ ԱԺ և պարունակում է սույն ռազմավարությամբ մատնանշված կարգավորումները: | |

**Նպատակ 3. Սահմանադրական բարեփոխումների անցկացում**

**Ռազմավարական ուղղություն՝** Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի ձևավորում

**Գործողություն 1.**Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը սահմանող փաստաթղթի (կազմավորման կարգի) մշակում և ընդունում և հանձնաժողովի ձևավորում

**Գործողություն 1-ի արդյունք**. Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու աշխատակարգը սահմանող փաստաթուղթն ընդունված է, Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը ձևավորված է և մշակում է սահմանադրական բարեփոխումների նախագիծը

| **Գործողություն** | **Պատասխանատու մարմին** | **Ելակետային դրություն** | **Թիրախն ըստ փուլերի** | | **Ստուգման միջոց** | **Ակնկալվող արդյունք** | **Ֆինանսավորման աղբյուր** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **2019 թվականի 2-րդ կիսամյակ** | **2020 թվական** | | | |
| Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կազմն ու | ՀՀ արդարադատության նախարարություն | Լուրջ մտահոգություններ կան, որ նախորդ սահմանադրական փոփոխությունների նախագիծը մշակած՝ | Մշակվել և հրապարակվել է Հանձնաժողովի կազմավորմ | Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ, | Հանձնաժողովի կազմավորման կարգի նախագիծը ընդունված է, Հանձնաժողովը ձևավորված է: | Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը ձևավորված է և մշակում է | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| աշխատակարգը սահմանող փաստաթղթի (կազմավորման կարգի) մշակում և ընդունում | Վարչապետի աշխատակազմ | ՀՀ նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամները գործել են շահերի բախման իրավիճակում, իսկ սահմանադրական հանրաքվեն չի համապատասխանել հանրաքվեի միջազգային չափանիշներին : Բացի այդ, Սահմանադրությամբ առկա են մի շարք կարգավորումներ, որոնք վերաիմաստավորման և վերանայման կարիք ունեն: առկա են մի շարք բացթողումներ, որոնք, պայմանավորված լինելով սուբյեկտիվ կամ օբյեկտիվ գործոններով, խաթարում են իրավունքի գերակայության սկզբունքը, որի հաստատմանը և | ան կարգի նախագիծ, որը նախատեսում է Հանձնաժողովի անդամի ընտրության պատշաճ մեխանիզմներ և ենթակա է հաստատման Կառավարության կողմից: | ընդունվել է, Հանձնաժողովը ձևավորվել է: | | սահմանադրական բարեփոխումների փաթեթը | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ամրապնդմանն է ուղղված եղել հենց Սահմանադրության փոփոխությունների նախաձեռնումը: Անհրաժեշտություն է առաջացել ապահովելու Սահմանադրական դատարանի պատշաճ և բնականոն գործունեությանը, հստակեցնելու Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության և նշանակման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու , լիազորությունների դադարեցման, Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման կարգը: | | | | | |
| **Նպատակ 4. Ընտրական օրենսդրության բարեփոխում**<br>**Ռազմավարական ուղղություն՝** ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում | | | | | | | |
| **Գործողություն 1.**ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում | | | | | | | |

| **Գործողություն 1-ի արդյունք**. Մշակվել և հրապարակվել է ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որն ապահովում է ռազմավարությամբ ամրագրված համապատասխան նպատակների իրականացումը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն** | **Պատասխանատու մարմին** | **Ելակետային դրություն** | **Ժամկետ ըստ փուլերի** | | **Ստուգման միջոց** | **Ակնկալվող արդյունք** | **Ֆինանսավորման աղբյուր** |
| | | | **2019 թվականի 2-րդ կիսամյակ** | **2020 թվական** | | | |
| ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի մշակում և ներկայացում ԱԺ | ՀՀ արդարադատության նախարարություն | Որպես իրապես ազատ և արդար գնահատված՝ ՀՀ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններից հետո անհրաժեշտ է ընտրական օրենսդրության մեջ նախատեսել այնպիսի կառուցակարգեր, որոնք վերոնշյալ ընտրությամբ ամրագրված ձեռքբերումները, այն է ՝ հանրության շրջանում ընտրությունների նկատմամբ վստահությունը, ընտրվող իշխանությունների | | Մշակվել և հրապարակվել է ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների և քաղաքացիական հասարակության հետ և հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: | ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթն ուղարկվել է ԱԺ: | ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և լրացումների փաթեթի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը մշակված է, ներկայացվել է ՀՀ ԱԺ և ապահովում է ռազմավարությամբ ամրագրված համապատասխան նպատակների իրականացումը: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | լեգիտիմությունը, ինչպես նաև հասարակության ընկալումներում ընտրական գործընթացի արդարացիության նկատմամբ վստահությունը կդնեն օրենսդրական հենքի վրա: | | | | | |

**Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում**
**Ռազմավարական ուղղություններ՝**
**Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման կարգի կատարելագործում**
**Բարձրագույն դատական խորհրդի որոշումների ընդունման գործընթացի բարելավում, թափանցիկության և պատճառաբանվածության ապահովում**

**Գործողություն 1**. Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր՝ միջազգային չափանիշներին համապատասխան կարգի ներդնում, որը, ի թիվս այլնի, պետք է նախատեսի՝
1.կատարելագործել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման օրենսդրական կանոնակարգումները.
2. ապահովել դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման գործընթացների թափանցիկությունը
**Գործողություն 1-ի արդյունք**. Դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման նոր կարգը ներդրված է, դատավորների թեկնածուների հավակնորդները ընտրվում են ավելի թափանցիկ ընթացակարգերով, ապահովված էքննության արդյունքների բողոքարկման կառուցակարգը, ինչպես նաև դատավորների, այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածությունը:
**Գործողություն 2**. Բարձրագույն դատական խորհրդի կողմից քվեարկության կարգի թափանցիկության և որոշումներ կայացնելու պատճառաբանվածության պահանջի ամրագրում, ինչպես նաև որոշումներ ընդունելիս ձայների հարաբերակցության վերաբերյալ կարգավորումների վերանայում:
**Գործողություն 2-ի արդյունք**. Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունվող որոշումների թափանցիկության և պատճառաբանվածության ապահովում, որոշումներ ընդունելու կառուցակարգերի կատարելագործում

| **Գործողություն** | **Պատասխանատու մարմին** | **Ելակետային դրություն** | **Ժիրախն ըստ փուլերի** | | **Ստուգման միջոց** | **Ակնկալվող արդյունք** | **Ֆինանսավորման աղբյուր** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **2019 թվական ի 2-րդ** | **2020 թվական** | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **կիսամյակ** | | | | |
| «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ուղղված՝<br>ա) գնահատման հանձնաժողովի կազմավորման կարգի փոփոխությանը.<br>բ) գնահատման պատճառաբանվածության ապահովմանը.<br>գ) հարցազրույցի փուլում միջազգային առաջատար հոգեբանական ինստիտուտների կողմից | ՀՀ արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | «Դատականօրենսգիրք» սահմանադրական օրենքով թեևէապեսբարեփոխվելէ դատավորներինշանակման կարգը, սակայն դրա գործնական կիրառման ընթացքում արդեն իսկ վեր են հանվել բազմաթիվ խնդիրներ ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական հարթություններում: Խնդիրները, մասնավորապես, վերաբերում են դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման գրավոր փուլի գնահատման պատճառաբանվածությանը, հարցազրույցի ընթացակարգին և գնահատման չափանիշներին, քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգին և որոշումների ընդունման թափանցիկությանը: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակ | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀԱԺ: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և կատարելագործում է դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման կարգը: | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| կազմված հոգեբանական թեստի անցկացմանը. դ) քննության արդյունքների բողոքարկման ընթացակարգի ներդրմանը և Բարձրագույն դատական խորհրդի որոշման ընդունման թափանցիկության ապահովմանը. ե) դատավորների այդ թվում՝ սույն ռազմավարությամբ նախատեսված Հակակոռուպցիոն դատարանի դատավորների թեկնածուների ընտրության գործընթացում միջազգային փորձագետների ներգրավվածու | | | ության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| թյան ապահովմանը; | | | | | | | |
| «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ ուղղված՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումներ ընդունելու գործընթացի բարելավմանը՝ ներառելով այդ որոշումների ընդունման թափանցիկության, պատճառաբանվածության և ընդունման համար անհրաժեշտ ձայների արդյունավետ | ՀՀ արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | Ներկայումս Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են փակ գաղտնի քվեարկությամբ, ինչն առաջացնում է հասարակության անվստահությունը և կասկածի տակ է դնում որոշումների ընդունման հարցում խորհրդի անդամների անկախությունը և հաշվետվողականություն ը: Բացի այդ, առանձին որոշումների պարագայում օրենքում բացակայում է դրանց պատճառաբանման պահանջը: Ի հավելումն, Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումներ ընդունելու համար սահմանված անհրաժեշտ ձայների քանակը ներկայումս առաջացրել է այդ մարմնի կողմից կարևորագույն որոշումներ ընդունելու անհնարինության, | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | Հայաստան իՀանրապետությանդատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀԱԺ: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և կատարելագործում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշումների ընդունման կարգը: | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| կառուցակարգեր: | | հատկապես նաև այն դեպքերում, երբ ԲԴԽ անդամներից մեկն օրենքով սահմանված կարգով հայտնում է ինքնաբացարկ: Նման պայմաններում անհրաժեշտ է փոփոխել նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշում ընդունելու համար անհրաժեշտ ձայների քանակի վերաբերյալ կարգավորումները: Իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ է նախատեսել խորհրդի կողմից քվեարկության կարգի թափանցիկության և որոշումներ կայացնելու պատճառաբանվածության պահանջ, ինչպես նաև փոփոխել որոշումներ ընդունելիս ձայների հարաբերակցության վերաբերյալ կարգավորումները: | հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | | | | |

**Նպատակներ 5, 6 և 7. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում, դատական իշխանության հանրային հաշվետվողականության կառուցակարգերի բարելավում և կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգ**
**Ռազմավարական ուղղություններ՝**

- դատավորներին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերի և ընթացակարգերի ներդնում,
- դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամի բարեվարքության գնահատման հավասարակշռված կառուցակարգի նորդնում
- դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի համապատասխանեցում կոռուպցիայի հաղթահարման նպատակին

**Գործողություն 1.**Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական հիմքերի մշակում
**Գործողություն 1-ի արդյունք.** Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ՝դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրական հիմքերը մշակված են, համապատասխանում են կոռուպցիայի հաղթահարման նպատակին
և եվրոպական (այդ թվում՝Վենետիկի հանձնաժողովի և ԵԴԻԽ-ի) չափորոշիչներին
**Գործողություն 2.** Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ կառուցակարգերի ներդնում
**Գործողություն 2-ի արդյունք.** Դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամների բարեվարքության գնահատումն իրականացնելու համար անհրաժեշտ կառուցակարգերը ներդրված են, դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները և Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ ԲԴԽ) գործում են անկախ, արդյունավետ, արհեստավարժ և պահպանում էթիկայի և հաշվետվողականության բարձր չափանիշներ

| Գործողություն | Պատասխանատու մարմին | Ելակետային դրություն | Թիրախն ըստ փուլերի | | Ստուգմանմ իջոց | Ակնկալվող արդյունք | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2019 թվականի 2-րդ կիսամյակ | 2020 թվական | | | |
| «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» | ՀՀ արդարադատության նախարարություն | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» | «Հայաստանի Հանրապետության | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի կատարելագործմանը, որոնք, ի թիվս այլնի, ներառում են. 1. հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամին լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող էական կարգապահական խախտումների ցանկը. | | օրենքի՝ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամների կարգապահական պատասխանատվության հիմքերի վերաբերյալ կարգավորումները չափազանց անորոշ են և շփոթության տեղիք տվող, ինչը խախտում է իրավական որոշակիության սկզբունքը:Դա է փաստում նաև օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի՝ դրա ընդունումից հետո տրված կարծիքը: Դատական օրենսգիրքը մարդու իրավունքների ոտնահարումը հստակորեն չի մատնանշում որպես կարգապահական պատասխանատվության հիմք: Դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամներիվարքագծի որոշ կանոններ | սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից, ուղարկվել ՀՀ ԱԺ և քննարկվել խմբակցությունների հետ: | դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը և հարակից նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ ԱԺ և համապատասխանումէեվրոպական (այդթվում՝ՎենետիկիհանձնաժողովիևԵԴԽԽ-ի) չափորոշիչներին | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2. հստակեցնել դատական սխալը դատավորի կողմից իր մասնագիտական գործունեության ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումից տարանջատելու հիմքերը.<br>3. հստակեցնել դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի վարքագծի կանոնները՝ դրանցից հանելով այն կանոնները, որոնք ձևակերպված են ոչ հստակ կամ որոնք բնույթով ոչ թե կարգապահական, այլ էթիկայի կանոններ են: | | ձևակերպված են անորոշ, իսկ որոշներն էլ բնույթով էթիկայի կանոններ են, որոնք չպետք է կարգապահական պատասխանատվությա ն հանգեցնեն: | | | | | |
| Հստակեցնել «Հայաստանի Հանրապետությա | ՀՀ արդարադատությ | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական | «Հայաստանի Հանրապետությա ն դատական օրենսգիրք» | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» | «Հայաստան ի Հանրապետ ության | «Հայաստանի Հանրապետութ յան դատական օրենսգիրք» | Ֆինանսա վորում չի պահանջվ ում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ն դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում՝ 1.կարգապահական վարույթի և դատավորին, Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացակարգերը. 2.դատավորին, Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման ընթացակարգը. 3. ընդլայնել Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին, Բարձրագույն | ան նախարարություն | օրենքում հստակ նախատեսված չեն կարգապահական վարույթի և դատավորին , ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության որոշ ընթացակարգային հարցեր, բացակայում է դատավորին, Բարձրագույն դատական խորհրդի անդամինկարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումը արդյունավետ բողոքարկելու մեխանիզմը: | սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է, քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և հստակեցնում է կարգապահական վարույթի և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի, ինչպես նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման ընթացակարգերը: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման հետ կապված լիազորությունները: | | | | | | | |
| «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք նախատեսում են՝ ա. դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը համալրել Կոռուպցիայի | ՀՀ արդարադատության նախարարություն | Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն տրված չէ, իսկ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը տրված է միայն դատավորներից բաղկացած հանձնաժողովին, որը կազմավորվում է 5 տարի ժամկետով: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | «Հայաստանի Հանրապետությանդատական օրենսգիրք» սահմանադրականօրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելումասին»ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀԱԺ: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ ևԿոռուպցիայի կանխարգելմանհանձնաժողով ինօժտումէդատավորինկատմամբկարգապահ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| կանխարգելման հանձնաժողովով. բ. Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: | | | | | | ականվարույթի արուցելուիրավասությամբ, ինչպես նաև փոփոխում է Կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգը և գործունեության ժամկետը: | |
| «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային | ՀՀ արդարադատության նախարարություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ): | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով դատավորների կողմից օրենսդրական փոփոխություններին համապատասխան արտահերթ հայտարարագրերի | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ծառայության մասին» օրենքներում հստակեցնել դատավորի վարքագծի կանոնները և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը, ավելացնել այնպիսի վարքագծի կանոններ, որոնց խախտումը կասկածի տակ է դնում դատավորի անկախությունը, անկողմնակալությունը և անկաշառությունը, սահմանել դատավորների բարեվարքության գնահատման համար անհրաժեշտ կառուցակարգեր՝ ուղղված.<br>1.ՀՀ բոլոր դատավորների, Բարձրագույն դատական | | ներկայացման վերաբերյալ պահանջ նախատեսված չէ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամներիհայտարարագրերի ստուգման առաջնահերթություն նախատեսված չէ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դատավորների խնդրահարույց հայտարարագրերի հիման վրա կարգապահական վարույթ հարուցելու և ԲԴԽ դիմելու իրավասություն չունի: | ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը մշակվել և քննարկվել են շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: | օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը մշակված են աներկայացվելեն ՀՀ ԱԺ: | «Հանրային ծառայության մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և ներառումենկառուցակարգերուղղված ՀՀբոլորդատավորներիկողմից օրենքովսահմանվածժամկետումիրենցփոխկապակցվածանձանցգույքի, եկամուտների, շահերիևծախսերիհայտարարագրերըԿոռուպցիայիկանխարգելմանհանձնաժողովիններկայացնելուն, Կոռուպցիայիկանխարգելմանհանձնաժողովի կողմիցՀՀ- | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| խորհրդի անդամների կողմից օրենքով սահմանված ժամկետում իրենց գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացնելուն.<br>2.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ՀՀ-ում գործող բոլոր դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անդամներիկողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրությանը.<br>3. Բարձրագույն դատական խորհրդի անդամների՝ բարեվարքության | | | | | | ումգործողբոլոր դատավորների կողմիցներկայացվածհայտարարագրերիուսումնասիրությանը, բարեվարքությանտեսանկյունիցխնդրահարույցհայտարարագրերիվերհանմանը, դրանցիիմանվրակարգապահական վարույթիհարուցմանըԲԴԽներկայացնելուն, ԲԴԽկողմիցվերոգրյալհայտարարագրերիարդյունավետքննությանը (ըստանհրաժեշտության): | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման համարհամապատասխան նյութերը ԲԴԽ ներկայացնելուն. 4. Դատավորների՝ բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց հայտարարագրերի վերհանմանը, դրանց հիման վրա կարգապահական վարույթի հարուցմանը և ԲԴԽ ներկայացնելուն. 6.ԲԴԽ կողմից վերոգրյալ հայտարարագրերի արդյունավետ քննությանը: | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարել փոփոխություն՝ նպատակ ունենալով Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն ստեղծել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որի անդամները կընտրվեն ոչ թե հինգ, այլ երկու տարով և որը կընդգրկի ոչ միայն դատավորներին, այլև Մարդու իրավունքների պաշտպանի մեկ և այն հասարական կազմակերպությունների երկու ներկայացուցիչներ, որոնց կանոնադրական | ՀՀ արդարադատության նախարարություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ): | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի համաձայն՝ դատավորների ընդհանուր ժողովը ձևավորում է Կարգապահական հարցերի հանձնաժողով, մինչդեռ, հաշվի առնելով, որ այդ մարմինը պետք է հետևի էթիկայի նորմերի ահպանմանը, այն առավել նպատակահարմար է վերանվանել: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել և քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է ևներկայացվելէՀՀԱԺ: | «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը նախատեսումէ Կարգապահական հարցերի հանձնաժողովի փոխարեն Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ստեղծում՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեություն: | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Վերապատրաստել<br>1.ԲԴԽ անդամներին (անհրաժեշտության դեպքում այդ նպատակով կատարելով օրենսդրական փոփոխություններ)՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց կարողությունները կատարված օրենսդրական փոփոխությունների և ներդրված նոր մեխանիզմների կիրառման բնագավառում.<br>2.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներին՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց կարողությունները կատարված օրենսդրական փոփոխությունների և ներդրված նոր մեխանիզմների | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ): | Շարունակական զարգացման փուլ թևակոխած դատաիրավական բարեփոխումների ժամանակահատվածում ԲԴԽ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամները վերապատրաստվելու անհրաժեշտություն ունեն՝ ապահովելու համար փոփոխվող օրենսդրության պահանջների կատարումը: | | Կազմվել են վերապատրաստումների ձեռնարկներ, ընտրվել են վերապատրաստումներն անցկացնող դասընթացավարները,<br>այացել են ԲԴԽև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների վերապատրաստումներ: | Կայացել են ԲԴԽևԿոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների վերապատրաստումներ: | ԲԴԽ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների վերապատրաստվել են և ապահովում են օրնսդրության պահանջների արդյունավետ կատարումը: | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| կիրառման<br>բնագավառում: | | | | | | | |
| **Նպատակ 5. Դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդում** | | | | | | | |
| **Ռազմավարական ուղղություններ**՝<br>• դատավորների կարգավիճակից բխող սոցիալական երաշխիքների ամրապնդում<br>• հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացում | | | | | | | |
| **Գործողություն 1.** Դատավորին տրամադրվող աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների բարձրացում և կարողությունների զարգացում<br>**Գործողություն 1-ի արդյունք.** Բարձրացել է դատավորին տրամադրվող աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների չափը, դատավորների կարողությունները զարգացել են: | | | | | | | |

**Գործողություն 2.** Դատավորի աշխատակազմի կարողությունների զարգացում, տրամադրվող ֆինանսական և սոցիալական երաշխիքների բարեփոխում և թվաքանակի ավելացում

**Գործողություն 2-ի արդյունք.** Դատավորի աշխատակազմի կարողությունները զարգացել են, տրամադրվող ֆինանսական և սոցիալական երաշխիքները բարեփոխվել են և թվաքանակն ավելացել է, աշխատակազմը համալրվել է տարբեր ոլորտների մասնագետներով:

**Գործողություն 3**. Դատարանների շենքերի և նյութատեխնիկական պայմանների բարելավում

**Գործողություն 3-ի արդյունք.** Դատարանների շենքերը և նյութատեխնիկական պայմանները բարելավվել են և բավարար են դատարանների արդյունավետ գործունեության համար

**Գործողություն 4**. Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում

**Գործողություն 4-ի արդյունք**. Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումները ձեռնարկված են, բարձրացել է հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մշակել օրենսդրական փոփոխություններ ուղղված՝ դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարների, բարձրացմանը: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն և ԲԴԽ (համաձայնությամբ): | Դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, դատավորի դատական իշխանության լիարժեք անկախությունն ու անկողմնակալությունն, ինչպես նաև դատավորի պաշտոնի գրավչությունն ապահովելու համար: | «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը մշակվել է: | «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել էշահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և հաստատվել է | «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ: | «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքնի նախագիծը ներկայացվել է ԱԺև ուղղված է դատավորի աշխատավարձի և դրա նկատմամբ սահմանված հավելավճար | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՀՀ կառավարությա ն կողմից: | | ների բարձրացմա նը: | |
| Իրականացնել դատավորների վերապատրաստ ումներ, այդ թվում միջազգային փորձագետների մասնակցությամ բ և միջազգային և եվրոպական առաջադեմ փորձի ներկայացմամբ, հետևյալ բնագավառներու մ՝<br>ա) կոռուպցիոն, տնտեսական և պաշտոնեական հանցագործությո ւնների քննություն,<br>բ) էլեկտրոնային արդարադատութ յան գործիքների ներդրմանը զուգահեռ կարևորվում է դատավորների՝ էլեկտրոնային կրիչների վրա | ՀՀ արդարադատու թյան նախարարությու ն, ՀՀ արդարադատու թյան ակադեմիա (համաձայնությ ամբ): | Ներկայում ՀՀ դատական համակարգում նկատվում է օրենքի տառացի մեկնաբանման պրակտիկա՝ առանց օրենքի իրավունքահենք արժևորման, ինչպես նաև դատավորների էթիկայի կանոնների մեկնաբանման և կիրառման, ՄԻԵԴ նախադեպային իրավունքի մեկնաբանման և կիրառման հետ կապված խնդիրներ: Բացի այդ, կոռուպցիայի դեմ պայքարի ակտիվ փուլի մեկնարկը ենթադրում է նաև կոռուպցիոն, պաշտոնեկան հանցագործությունների քննության հմտությունների զարգացման անհրաժեշտություն: Իսկ էլեկտրոնային արդարադատության | | Մշակվելենհամ ապատասխան վերապատրաս տման ծրագրեր, մշակված ծրագրի հիման վրա կազմակերպվու մ են դատավորների վերապատրաս տման դասընթացներ: | Դատավորների վերապատրաստմա ն դաընթացների ծրագրերը մշակված են, իրականացվում են դատավորների վերապատրաստում ներ: | Բարելավվել են դատավորնե րի կարողությու նները մատնանշվա ծ բնագավառն երում, դատավորնե րն իրենց գործունեությ ան ընթացքում դրսևորում են էթիկայի կանոններին համապատա սխան վարքագիծ: | Օրենքո վ չարգելվ ած աղբյուր ներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| գտնվող ապացույցների հետ աշխատելու հմտությունների զարգացումը, գ) մասնագիտական վարքագծի կանոններ և էթիկա, դ) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի կոնկրետ հոդվածների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունք: ե) դատավորի դերի, դատական ակտի պատճառաբանվածության, դատավորի | | գործիքների ներդրումը՝ էլեկտրոնային ապացուցյների հետ աշխատելու հմտությունների բարելավում: | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| անկախության գործնական մարտահրավերների հետ կապված հարցեր: | | | | | | | |
| Փոփոխություններ կատարել համապատասխան իրավական ակտերում՝ ուղղված դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացմանը: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ԲԴԽ (համաձայնությամբ): | Ներկայումս դատավորների թվակազմով պայմանավորված առաջացել է դատարանների գերծանրաբեռնվածություն, ինչը հնարավոր է հաղթահարել դատավորների թվակազմի ավելացմամբ:<br>Դատավորների աշխատակազմի թվականակը փոքր է, ինչը հանգեցնում է աշխատակազմի գերծանրաբեռնվածության և համապատասխանաբար՝ աշխատանքի ոչ բարձր արդյունավետության: Բացի այդ, դատարանի աշխատակազմում ընդգրկված չեն | Դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակվել են, քննարկվել են շահագրգիռ կողմերի հետ, դրվել են հանրային քննարկման և ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Դատավորների և նրանցաշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | Դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: | Դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակի ավելացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և նախատեսում են դատավորի աշխատակազմի թվաքանակի աճ: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տարբեր ոլորտների մասնագետներ, որոնք կարող են առաջակցել դատավորին արդարադատություն իրականացնելիս տարբեր նեղ մասնագիտական հարցերի լուծման գործում: | | | | | |
| Փոփոխություննե ր կատարել համապատասխ ան իրավական ակտերում՝ ուղղված դատավորի աշխատակազմի աշխատավարձե րի բարձրացմանը: | ՀՀ արդարադատու թյան նախարարությու ն, ՀՀ ֆինանսների նախարարությու ն, ԲԴԽ (համաձայնությ ամբ): | Դատավորի աշխատակազմի աշխատավարձերը բավարար չեն վերջիններիս մասնագիտական անկախությունն ու անկողմնակալությունն ապահովելու, ինչպես նաև դատավորի մասնագիտության գրավչությունը բարձրացնելու և բարձր որակավորում ունեցող մասնագետներին ներգրավելու համար: | Դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակվել են, քննարկվել են շահագրգիռ կողմերի հետ, դրվել են հանրային քննարկման և ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Դատավորի աշխատակազմի աշխատավարձե րի բարձացման նպատակով համապատասխ ան իրավական ակտերում փոփոխությունն երի կատարման նախագծերը հաստատվել են ՀՀ կառավարությա ն կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ: | Դատավորի աշխատակազմի աշխատավարձերի բարձացման նպատակով համապատասխան իրավական ակտերում փոփոխությունների կատարման նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: | Դատավորի աշխատակա զմի աշխատավա րձերի բարձրացմա ն նպատակով համապատա սխան իրավական ակտերում փոփոխությո ւնների կատարման նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և նախատեսու մ են դատավորի աշխատակա զմի | Օրենքո վ չարգելվ ած աղբյուր ներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | աշխատավարձերի բարձրացում: | |
| Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն և ԲԴԽ (համաձայնությամբ): | Հայաստանի Հանրապետությունում դեռևս առկա են դատարանների կամ դրանց նստավայրերի վարչական շենքերի համար ոչ բավարար տարածքի կամ այլ պետական մարմինների նստավայրերից պատշաճ կերպով սահմանազատված չլինելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը դատարան ապահովելու խնդիրներ: Որոշ դատարանների շենքեր նաև ապահովված չեն նվազագույն անհրաժեշտ պայմաններով՝ դատական նիստերի դահլիճներով, բաց և փակ գոտիներ ստեղծելու հնարավորությամբ և այլն: | Սկսվել է դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատումը: | Ավարտվել է դատարանների ն արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատումը,դատարանները սկսել են ապահովվել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի: | Դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմանների բարելավման կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ տեղեկանք և սկսված շինարարական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր: | Դատարաններն ապահովված են իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ շենքային պայմաններով: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դատարաններին ապահովել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն և ԲԴԽ (համաձայնությամբ): | Դատարանների նյութատեխնիկական բազան բավարար չէ արդյունավետ գործունեության համար: | Սկսվելէ դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկի մշակումը: | Ավարտվել է դատարանների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկի մշակումը, սահմանվել են առաջնահերթությունները և տրամադրման ժամանակացույցը, դատարաններն սկսել են ապահովվել իրենց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով՝ ըստ սահմանված առաջնահերթությունների և ժամանակացույցի: | Դատարաններին արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների կարիքների գնահատման, առաջնահերթությունները և ժամանակացույցը սահմանելու վերաբերյալ տեղեկանք և արդեն տրամադրված աջակցության վերաբերյալ փաստաթղթեր: | Դատարաններն ապահովված են իրենց արդյունավետ գործունեության համար նյութատեխնիկական բազայով: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրանկատմամբվ ստահությանբար ձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ձեռնարկում | Արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ) | Տարբեր հետազոտություններից ի և հասարակական կարծիքի վերլուծություններից անժխտելի է, որ հանրությունը տասնամյակներ շարունակ ձևավորված խորը անվստահություն է տածում դատական համակարգի նկատմամբ:Առկա է անհրաժեշտություն հանրությանն իրազակելու դատական բարեփոխումներիընթացքի, դրանց արդյունքում դատարանների գործունեության բարելավման, արդարադատության մատչելիության բարձրացման, դատարանի անկախության երաշխիքների գործնական կիրառման մասին: | | Մշակվել է հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ծրագիր,<br>հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումները սկսել են իրականացվել՝ համապատասխան մշակված ծրագրի: | Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումների ծրագիրը մշակված է, միջոցառումներն իրականացման փուլում են: | Հանրության մոտ դատական իշխանության դերի ընկալման և դրա նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված իրազեկման միջոցառումները ձեռնարկված են, բարձրացել է հանրության վստահությունը դատական իշխանության նկատմամբ: | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| **Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում** | | | | | | | |

**Ռազմավարական ուղղություն**՝ Դատախազության համակարգի բարեփոխում

**Գործողություն 1.** Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, փոփոխել դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը:

**Գործողություն 1-ի արդյունք**. Դատախազները շարունակաբար անցնում են բարեվարքության ստուգման միջով, ինչը նվազեցնում է համակարգում կոռուպցիան և ապահովում իրենց գործունեության մեջ դատախազների մասնագիտական վարքագծի կանոնների պահպանումը

**Գործողություն2.**Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում

**Գործողություն 2-ի արդյունք**. Որակավորման հանձնաժողովի կազման կանոնները փոփոխված են, դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվում է գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով, ընդլայնված է ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում

**Գործողություն 3**. Ապահովել դատախազների ընտրության մրցույթի թափանցիկությունը

**Գործողություն 3-ի արդյունք**. Ապահովվել է դատախազների ընտրության մրցույքի թափանցիկությունը

**Գործողություն 4**. Իրականացնել դատախազության կառուցվածքայի նփոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետաշխատելու և այլ բնագավառներում:

**Գործողություն 4-ի արդյունք**. Դատախազության կառուցվածքային փոփոխություններն իրականացված են, իրականացվել են դատախազների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ

| **Գործողություն** | **Պատասխանատու մարմին** | **Ելակետային դրություն** | **Թիրախն ըստ փուլերի** | | **Ստուգման միջոց** | **Ակնկալվող արդյունք** | **Ֆինանսավորման աղբյուր** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | **2020թվականի 1-ին կիսամյակ** | **2020թվականի 2-րդ կիսամյակ** | | | |
| Ներդնել դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգ՝գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները, | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) | Դատախազականհամակարգիբարեփոխումներըառաջինհերթինպայմանավորված ենայդհամակարգին կատմամբհանրությանվստահությանբարձրացմանանհրաժեշտությամբ: Եվրոպականմիությա | Մշակվել է դատախազներիբարեվարքության գնահատման կառուցակարգը, այդ թվում՝ փոփոխվել է դատախազների | Դատախազներիբարեվարքության գնահատման կառուցակարգը և էթիկայի հանձնաժողովի կազմավորման | Դատախազներիբարեվարքության գնահատման կառուցակարգը և էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգըքննարկվել է շահագրգիռ մարմինների | Դատախազների բարեվարքության գնահատման կառուցակարգը ներկայացվել է ԱԺ և որդեգրել է դատավորներիբարեվարքության գնահատմանսկզբունքները, | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| փոփոխելով էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը | | նևԵվրոպայիխորհրդի «Հայաստանիարդարադատությանհամակարգիանկախության, պրոֆեսիոնալիզմիև հաշվետվողականությանամրապնդումը» համատեղծրագրիշրջանակումկազմվածզեկույցումփաստվելէ, դատարանից օգտվողների բավարարվածությունը դատախազների մասնագիտական գործունեությունից բարձր չէ: | բարեվարքության գնահատում իրականացնող էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը՝ ընդլայնելով ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը և սահմանափակելով Գլխավոր դատախազի դերը հանձնաժողովի ձևավորման գործընթացում: | կարգըքննարկվել է շահագրգիռ մարմինների քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ | քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ | փոփոխվել է դատախազների բարեվարքության գնահատում իրականացնող էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգը: | |
| | | | | | | | |
| Փոփոխել Որակավորման հանձնաժողովի կազմման կանոնները, որպեսզի դրա անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) | Գործող կարգի համաձայն Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի | Մշակվել է «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը | «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը քննարկվել է շահագրգիռ | «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության | «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը ներկայացվել է ԱԺ և | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում | | ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: Այս կարգը, էլ ավելի է ընդգծում դատախազության համակարգի աստիճանակարգային ու փակ բնույթը, ինչը վտանգում է առանձին դատախազների անկախությունը: | | մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ներկայացվել է ԱԺ | հետ և ներկայացվել է ԱԺ | ապահովում է, որպեսզի Որակավորման հանձնաժողովի անդամների պարզ մեծամասնությունը նշանակվի գլխավոր դատախազի մասնակցությունը չներառող գործընթացով և ընդլայնել ոչ ավագ պաշտոններում դատախազների ներկայացվածությունը դատախազների ներկայացուցչական մարմիններում | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Իրականացնել դատախազության կառուցվածքային փոփոխություններ և կարողությունների զարգացում պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, ինչպես նաև կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ), ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) | Դատախազական համակարգի բարեփոխումները առաջին հերթին պայմանավորված են այդ համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացման անհրաժեշտությամբ: Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» համատեղ ծրագրի շրջանակում կազմված զեկույցում փաստվել է, որ դատախազների անձնական ու մասնագիտական | Մշակվել է կառուցվածքային փոփոխություններ նախատեսող՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, մշակվել են համապատասխան բնագառվերում դատախազների վերապատրաստումների ծրագրերը: | Կառուցվածքային փոփոխություններ նախատեսող՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ, հաստատվել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ | Կառուցվածքային փոփոխություններ նախատեսող՝ «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության հետ և ներկայացվել է ԱԺ, դատախազները սկսել են վերապատրաստվել՝ մշակված ծրագրերի հիման վրա: | «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը ներկայացվել է ԱԺ և նախատեսում է կառուցվածքային փոփոխություններ պետական շահերի ոչ քրեադատավարական միջոցներով պաշտպանության բնագավառում, իրականացվել են դատախազների կարողությունների | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հատկանիշներով բավարարվածության գնահատականները ցածր են՝ հատկապես արդարադատության իրականացման ոլորտում ներգրավված մյուս դերակատարների համեմատությամբ: Բացի այդ, դատարանից օգտվողներն ամենից քիչ բավարարված են դատախազների պրոֆեսիոնալիզմով: | | | | զարգացմանն ուղղված միջոցառումներ | |
| **Նպատակ 10. Իրավապահ համակարգի բարեփոխում** | | | | | | | |
| **Ռազմավարական ուղղություն**՝ Քննչական մարմինների բարեփոխում | | | | | | | |
| **Գործողություն 1.** Քննիչների բարեվարքության գնահատման նպատակով վերանայել քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը՝դրա թափանցիկությունն ապահովելու նպատակով՝ գործի դնելով դատավորների բարեվարքության գնահատման համար որդեգրված սկզբունքները՝ ապահովելով բարեվարքության գնահատումը քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմնի կողմից<br>**Գործողություն 1-ի արդյունք**. Քննիչները շարունակաբար անցնում են բարեվարքության ստուգման միջով, ինչը նվազեցնում է համակարգում կոռուպցիան և ապահովում իրենց գործունեության մեջ քննիչների մասնագիտական վարքագծի կանոնների պահպանումը<br>**Գործողություն 2**. Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում | | | | | | | |

| **Գործողություն 2-ի արդյունք.** Իրականացվել են քննիչների կարողությունների զարգացման ուղղված միջոցառումներ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն** | **Պատասխանատու մարմին** | **Ելակետային դրություն** | **Թիրախն ըստ փուլերի** | | **Ստուգման միջոց** | **Ակնկալվող արդյունք** | **Ֆինանսավորման աղբյուր** |
| | | | **2020թվականի 1-ին-րդ կիսամյակ** | **2020թվականի 2-րդ կիսամյակ** | | | |
| Համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի կատարելագործմանը | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ հատուկ քննչական ծառայություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | Արդարադատության համակարգի առողջացման նպատակով կարևոր է ապահովել, որպեսզի այդ համակարգի մաս կազմող բոլոր մարմինները, այդ թվում՝ քննչական մարմինները, իրենց կառուցվածքով, գործունեության սկզբունքներով և մասնագիտական ներուժով համապատասխանեն արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին: | Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը մշակվել է | Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը քննարկվել է շահագրգիռ մարմինների, քաղաքացիական | Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը և ներկայացվել է ՀՀ ԱԺ | Քննիչներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի և ընթացակարգերի փոփոխություն նախատեսող համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերի փաթեթը ներկայավել է ԱԺ և պարունակում է քննիչների բարեվարքությ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հասարակության հետ, հաստատվել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ | | ան արդյունավետ գնահատման համար անհրաժեշտ կարգավորումներ | |
| Իրականացնել քննիչների կարողությունների զարգացում կոռուպցիոն, տնտեսական, պաշտոնեական և այլ հանցագործությունների քննության, էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու և այլ բնագավառներում | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ) | Արդարադատության համակարգի առողջացման նպատակով կարևոր է ապահովել, որպեսզի այդ համակարգի մաս կազմող բոլոր մարմինները, այդ թվում՝ քննչական մարմինները, իրենց կառուցվածքով, գործունեության սկզբունքներով և մասնագիտական ներուժով համապատասխան են արդարադատության նոր հայեցակարգի տեսլականին: | Մշակվել են համապատասխան բնագառվերում քննիչների վերապատրաստումների ծրագրերը | Քննիչները սկսել են վերապատրաստվել՝ համաձայն մշակված ծրագրերի | Քննիչները սկսել են վերապատրաստվել՝ համաձայն մշակված ծրագրերի | Իրականացվել են քննիչների կարողությունների զարգացման ուղղված միջոցառումներ | Օրենքով չարգելված աղբյուրներ |
| **Նպատակ 11. Քրեական և քրեադատավարական օրենսդրության բարեփոխում** | | | | | | | |
| **Ռազմավարական ուղղություններ՝**<br>Քրեական ենթամշակույթի վերացում | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Այլընտրանքային պատժի համակարգի ներդնում<br>Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ներդնում<br>Քրեական դատավարության օրենսդրության բարեփոխում<br>Այլընտրանքային խափանման միջոցների ներդնում<br>Համաձայնեցման (plea bargaining) և համագործակցության վարույթներ<br>Անչափահասների և խոցելի անձանց մասնակցությամբ վարույթների կատարելագործում<br>Քրեական գործերով իրավական փոխօգնության արդյունավետ կարգավորման նախատեսում | | | | | | | |
| **Գործողություն 1**. Մշակել և ԱԺ ներկայացնել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ<br>**Գործողություն 1-ի արդյունք**. ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծն ընդունվել է, ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործվել է, արդիականացվել է պատժահամակարգը, հստակեցվել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված հարցերը, բարելավվել են անչափահասների նկատմամբ քրեական ներգործության միջոցները, վերանայվել է հանցանք համարվող արարքների շրջանակը, հստակեցվել են հանցանքների որակման կանոնները, վերացվել են գործող օրենսգրքում առկա հակասությունները, քրեական օրենսգիրքը համապատասխանում է եվրոպական չափանիշներին:<br>**Գործողություն 2**. Մշակել և ԱԺ ներկայացնել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ<br>**Գործողություն 2-ի արդյունք**. ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն ընդունվել է, հստակեցվել և կատարելագործվել են ՀՀ-ում քրեական վարույթի ընթացակարգերը, ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթներ, քրեական վարույթի մասնակիցների գործառույթները և դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները, բարելավվել են քրեական վարույթում մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքերը և գործնական կառուցակարգերը, արդիականացվել են քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման վերաբերյալ կարգավորումները, բարեփոխվել են դատական ակտերի վերանայման հետ կապված կանոնակարգումները, օրենսգիրքը համապատասխանեցվել է ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի արդյունքում ներկայացված առաջարկներին : | | | | | | | |
| **Գործողություննե ր** | **Պատասխանատու մարմին** | **Ելակետային դրություն** | **Ժիրախ ըստ փուլերի** | | **Ստուգման միջոց** | **Ակնկալվող արդյունք** | **Ֆինանսա վորման աղբյուր** |
| | | | **2019թ.-ի 2-րդ կիսամյակ** | **2020 թ.-ի 1-ին կիսամյակ** | | | |
| Մշակել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծ | ՀՀ արդարադատության նախարարություն | Քրեական գործող օրենսգիրքը հիմնովին փոփոխման կարիք ունի: Դրանով նախատեսված պատժահամակարգը, քրեաիրավական ներգործության այլ միջոցները չեն | ՀՀքրեականնորօրենսգրքինախագիծը մշակվել է: | | ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է: | ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծով ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործվել է, արդիականացվ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համապատասխանում ներկա իրողություններին, օրենսգրքում առկա են հակասություններ: Նոր օրենսգրքի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են: | | | | ել է պատժահամակարգը, հստակեցվել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված հարցերը, բարելավվել են անչափահասների նկատմամբ քրեական ներգործության միջոցները, վերանայվել է հանցանք համարվող արարքների շրջանակը, հստակեցվել են հանցանքների որակման կանոնները, վերացվել են գործող օրենսգրքում առկա հակասություննե | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | րը, քրեական նոր օրենսգրքի նախագիծը համապատասխանում է եվրոպական չափանիշներին: | |
| Կազմակերպել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկումը | ՀՀ արդարադատության նախարարություն | - | ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է: | - | ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթը: | ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը լրամշակվել է՝ քաղաքացիական հասարակության, բոլոր շահագրգիռ կողմերի, մասնագիտական համայնքի կարծիքները հաշվի առնելով: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը | ՀՀ արդարադատության նախարարություն | - | ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, հաստատվել է ՀՀ | ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: | ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և | ՀՀ ԱԺ ներկայացված նախագծով ՀՀ քրեական օրենսդրությունը կատարելագործվել է, արդիականացվ | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կառավարության կողմից: | | ներկայացվել է ՀՀ ԱԺ: | ել է պատժահամակարգը, հստակեցվել են անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված հարցերը, բարելավվել են անչափահասների նկատմամբ քրեական ներգործության միջոցները, վերանայվել է հանցանք համարվող արարքների շրջանակը, հստակեցվել են հանցանքների որակման կանոնները, վերացվել են գործող օրենսգրքում առկա հակասություննե | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | րը, քրեական նոր օրենսգրքի նախագիծը համապատասխանում է եվրոպական չափանիշներին: | |
| ՀՀ քրեական նոր օրենսգրքի վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ արդարադատության ակադեմիա | Քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցներին և դատավորներին անհրաժեշտ է վերապատրաստել՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի կարգավորումներին վերջիններիս իրազեկելու համար: | Ընտրվել են վերապատրաստումների ծրագրերի մշակման և վերապատրաստումների անցկացման համար մասնագետներ, մշակվել են վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղություններ: | Մշակվել են վերապատրաստման ծրագրերը, անցկացվում են վերապատրաստումներ: | Մշակավել են քրեական վարույթի հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստման ծրագրեր, անցկացվում են վերապատրաստումներ: | Քրեականվարույթի հանրային մասնակիցները և դատավորներըիրազեկվածենքրեականնորօրենսգրքիկարգավորումներին: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| Օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն տրամադրել քրեական վարույթն | ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ), Քննչական կոմիտե (համաձայնությամբ), Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ), | Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ է տրամադրել նյութատեխնիկական աջակցություն: | Մշակվել է Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրականփոփոխություններից բխողգործառույթներիիրականացմանհամարանհրա | Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին սկսել են տրամադրվել օրենսդրակ | Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններիցբխողգործառույթների իրականացմա | Քրեական վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում՝ դատարանները հագեցված են օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| իրականացնող մարմիններին, այդ թվում՝դատարաններին: | Հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ), ՀՀ ոստիկանություն | | ժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունները և ժամանակացույցը: | անփոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ ըստ առաջնահերթությունների և ժամանակացույցի: | ն համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունները և ժամանակացույցը մշակված են, միջոցները սկսել են տրամադրվել: | համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով: | |
| Մշակել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ | ՀՀ արդարադատության նախարարություն | Քրեական դատավարության գործող օրենսգիրքը հիմնովին փոփոխման կարիք ունի: Արդիականացման կարիք ունեն քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության, քննչական և դատավարական գործողությունների մեխանիզմները: Նոր օրենսգրքի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են: | ՀՀքրեական դատավարության նորօրենսգրքինախագիծը մշակվել է: | - | ՀՀքրեական դատավարության նորօրենսգրքի նախագիծը մշակվել է: | ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով հստակեցվել և կատարելագործվել են ՀՀ-ում քրեական վարույթի ընթացակարգերը, ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթներ, քրեական | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարույթի մասնակիցների գործառույթները և դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները, բարելավվել են քրեական վարույթում մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքերը և գործնական կառուցակարգերը, արդիականացվել են քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման վերաբերյալ կարգավորումները, բարեփոխվել են դատական ակտերի վերանայման հետ կապված կանոնակարգումները, | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | օրենսգիրքը համապատասխանեցվել է ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի արդյունքում ներկայացված առաջարկներին: | |
| Կազմակերպել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հանրային քննարկումը | ՀՀ արդարադատության նախարարություն | - | ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակվել է: | - | ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի՝ բոլոր շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված տարբերակը մշակված է, առկա է նախագծի վերաբերյալ ամփոփաթերթը: | ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է քաղաքացիական հասարակության, բոլոր շահագրգիռ կողմերի, մասնագիտական համայնքի կարծիքները հաշվի առնելով: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի | ՀՀ արդարադատության նախարարություն | - | ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի | ՀՀ քրեական դատավարության նոր | ՀՀ քրեական դատավարության նոր | ՀՀ ԱԺ ներկայացված՝ քրեական | Ֆինանսավորում չի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության, ապա՝ ՀՀ ԱԺ քննարկմանը | | | նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: | օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: | օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ԱԺ: | դատավարության նոր օրենսգրքի նախագծով հստակեցվել և կատարելագործվել են ՀՀ-ում քրեական վարույթի ընթացակարգերը, ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթներ, քրեական վարույթի մասնակիցների գործառույթները և դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները, բարելավվել են քրեական վարույթում մարդու իրավունքների պաշտպանության օրենսդրական հիմքերը և գործնական կառուցակարգերը, | պահանջվում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | արդիականացվել են քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման վերաբերյալ կարգավորումները, բարեփոխվել են դատական ակտերի վերանայման հետ կապված կանոնակարգումները, օրենսգրքի նախագիծը համապատասխանեցվել է ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 4-րդ փուլի արդյունքում ներկայացված առաջարկներին: | |
| ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ | Քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցներին և | Ընտրվել են վերապատրաստումների | Մշակվել են վերապատրաստման | Մշակվել են քրեական վարույթի | Քրեականվարույթի հանրային մասնակիցները | Օրենքով չարգելված |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| վերաբերյալ քրեական վարույթի բոլոր հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստումներ: | արդարադատության ակադեմիա | դատավորներին անհրաժեշտ է վերապատրաստել՝ ՀՀ նոր քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումների մասին վերջիններիս իրազեկելու համար: | ծրագրերի մշակման և վերապատրաստումների անցկացման համար մասնագետներ, մշակվել են վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղություններ: | ծրագրերը, անցկացվում են վերապատրաստումներ: | հանրային մասնակիցների և դատավորների վերապատրաստման ծրագրեր, անցկացվում են վերապատրաստումներ: | և դատավորները իրազեկված են քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներին: | աղբյուրներ: |
| Օրենսդրական փոփոխություններից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական աջակցություն տրամադրել քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին: | ՀՀ ֆինանսների նախարարություն | Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝դատարաններին օրենսդրականփոփոխություններիցբխողգործառույթներիիրականացմանհամարանհրաժեշտ է տրամադրել նյութատեխնիկականաջակցություն: | Մշակվել է Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրականփոփոխություններից բխողգործառույթներիիրականացմանհամարանհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունները և ժամանակացույցը: | Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին սկսել են տրամադրվել օրենսդրականփոփոխություններիցբխողգործառույթներիիրականացմանհամարանհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները՝ | Քրեական վարույթն իրականացնող մարմիններին, այդ թվում՝ դատարաններին օրենսդրական փոփոխություններիցբխողգործառույթների իրականացմանհամարանհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ցանկը, առաջնահերթությունները և ժամանակացույցը մշակված | Քրեական վարույթն իրականացնող մարմինները, այդ թվում՝ դատարանները հագեցված են օրենսդրականփոփոխություններիցբխողգործառույթներիիրականացմանհամարանհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ըստ առաջնահեր թությունների և ժամանակա ցույցի: | են, միջոցները սկսել են տրամադրվել: | | |

**Նպատակ 12. Քաղաքացիական եվ քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Քաղաքացիական օրենսդրության բարեփոխում
- Քաղաքացիական դատավարության իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրների գույքագրման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծում

**Գործողություն 1.** Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր:
**Գործողություն 1-իարդյունք.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը և քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը համապատասխանում է շուկայի առկա պահանջներին:
**Գործողություն 2.** ՀՀքաղաքացիականդատավարությանօրենսգրքի կիրառության ընթացքում ծագած խնդիրների առանձնացում և դրանց լուծման նպատակովփոփոխությունների կատարում
**Գործողություն 2-ի արդյունք.** Պրակտիկայում նոր ինստիտուտների և նոր կարգավորումների կիրառման արդյունքում ծագած խնդիրների լուծում:

| Գործողություն | Պատաս-խանատումարմին | Ելակետային դրություն | Թիրախնըստփուլերի | | Ստուգման միջոց | Արդյունք | Ֆինանսավորմանաղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2020 թվականի 1-ին կիսամյակ | 2020 թվականի 2-րդ կիսամյակ | | | |
| Մշակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և այլ իրավական ակտերում | ՀՀ արդարադատության նախարարություն, | 1) Հստակեցված չեն ոչ թղթային արժեթղթերի, էլեկտրոնային փողի, կրիպտոակտիվների կարգավիճակը: | Օրենքի նախագծերը Մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ | Օրենքի նախագծերը Հավանության է արժանացել ՀՀ կառավարու-թյան | Օրենքի նախագծերը Մշակված են և | Օրենսդրությունը համապատասխանում է | Օրենքով չարգելված այլ միջոցներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| փոփոխություններ կատարելուն ուղղված օրենքների նախագծեր: | ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | 2) Արդիականացված չեն պայմանագրային իրավունքի, այդ թվում՝պայմանագրերի ձևին վերաբերող կարգավորումները, կնքվում է առցանց տիրույթում (էլեկտրոնային հարթակներում)՝կնքվող պայմանագրերին վերաբերող կարգավորումները: 3) Առկա են շուկայական հարաբերություններին ոչ համահունչ կազմակերպաիրավակ անձև կորպորատիվ իրավահարաբերություններ կարգավորող օրենսդրությունում առկա չեն կորպորատիվ կառավարման ժամանակակից լուծումներ: 4) Ապահովված չէ գնումների վերաբերյալ օրենսդրության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխանությունը 5) Պայմանագրերի առանձին տեսակները կարգավորող իրավական նորմերը չեն | վարչապետի աշխատակազմ: | կողմից և ներկայացվել են ԱԺ: | ներկայացվել են ՀՀ ԱԺ: | քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացման արդի միտումներին: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | համապատասխանում ոլորտի զարգացումներին ( այդ թվում՝բանկային և ապահովագրական), առկա են հակասություններ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ոլորտի օրենսդրությամբ սահմանված հատուկ կարգավորումներիմիջև: 6) Ապահովված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված՝արժեթղթերին վերաբերող, կարգավորումների համապատասխանություն համարժեքությունը ոլորտը կարգավորող օրենսդրության հետ: 7) Հստակ տարանջատված չեն ապահովված իրավունքի և գրավի ինստիտուտները, դրանց կիրառման առանձնահատկություններ ը: 8) Վերանայման ենթակա են վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների հետ կապված իրավակարգավորումները՝ | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | անչափահասների շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ, կյանքին և առողջությանը պատճառած վնասի վերաբերյալ նորմերը: | | | | | |
| Մշակել ՀՀ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Վճարման հանձնարարակով | ՀՀարդարադատությաննախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Վճարման հանձնարարակով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի առանձին կարգավորումներ անհրաժեշտէհամապատասխանեցնելմասնավորիրավահարաբերություններիկ | Օրենքի նախագծերը Մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Օրենքի նախագծերը Հավանության է արժանացել ՀՀ կառավարու-թյան կողմից և ներկայացվել են ԱԺ: | Օրենքի նախագծերը Մշակված են և ներկայացվելեն ՀՀ ԱԺ: | Օրենսդրությունը համապատասխանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացման արդի միտումներին: | Օրենքով չարգելված այլ միջոցներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և նշված օրենքներից բխող այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելուն ուղղված նախագծեր: | | արգավորմանժամանակա կիցմոտեցումներին: | | | | | |
| ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառության ընթացքում ծագած խնդիրների առանձնացում և դրանց լուծման նպատակով փոփոխություններ ի կատարում: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունմամբ կատարելագործվեց քաղաքացիական արդարադատությունը, ներդրվեցին մի շարք նոր ինստիտուտներ, որոնք ուղղված էին դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանն ու գործի քննության արդյունավետության բարձրացմանը: Այդուհանդերձ, նոր կարգավորումները ևս | Մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: | «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքինախագիծըն երկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով գույքագր | Պետական բյուջե Կամ օրենքով չարգելված այլ միջոցներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | առաջացրել են տարբեր խնդիրներ: | | | | վել և լուծվել են օրենսգրքի կիրառման ընթացքում ծագած խնդիրները: | |
| **Նպատակ 13. Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում** | | | | | | | |
| **Ռազմավարական ուղղություններ**՝<br>• Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծում<br>• Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման վարչադատավարական կարգի վերացում<br>• Վարչական դատավարությունում ծանուցման ընթացակարգերի բարելավում<br>• Գրավոր և պարզեցված ընթացակարգերի կիրառում վարչական դատավարությունում<br>• Պետական տուրքի հետ կապված կարգավորումների վերանայում<br>• Վարչական դատավարության հատուկ վարույթների արդյունավետության բարձրացում<br>• Վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը<br>• Վարչական կարգով վարչական ակտերի բողոքարկման արդյունավետության բարձրացում<br>• Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության կատարելագործում<br>• Վարչական իրավախախտումների համար նախատեսված տույժերի վերանայում | | | | | | | |
| **Գործողություն 1.**ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով Վճռաբեկ դատարանի վարչական պալատ:<br>**Գործողություն 1-իարդյունք**. Վճռաբեկ դատարանում վարչական պալատի ստեղծման միջոցով դատական պաշտպանության արդյունավետության ապահովում<br><br>**Գործողություն 2.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ:<br>**Գործողություն 2-ի արդյունք**. Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ենթակայության հարցի և գործի քննության առանձնահատկությունների հստակեցում<br><br>**Գործողություն 3.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով ծանուցումների նոր ընթացակարգեր: | | | | | | | |

**Գործողություն 3-ի արդյունք**. Վարչական դատավարությունում ծանուցման նոր ընթացակարգերի ներդնում

**Գործողություն 4.**ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով գրավոր և պարզեցված նոր վարույթներ:
**Գործողություն 4-ի արդյունք**. Վերաքննության և վճռաբեկության փուլերի համար գրավոր ընթացակարգի, իսկ կոնկրետ գործերի համար պարզեցված վարույթի նախատեսում

**Գործողություն 5.**ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և <<Պետական տուրքի մասին>> օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականություն:
**Գործողություն 5-ի արդյունք.** Պետական տուրքից ազատված լինելու կարգավորումների վերանայում

**Գործողություն 6.**ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները:
**Գործողություն 6-ի արդյունք.** Վարչական դատավարությունում վարույթների տեսակների և դրանց դասակարգման վերանայում

**Գործողություն 7.** Վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը
**Գործողություն 7-ի արդյունք.** վարչարարության արդյունքում խախտված իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովում

**Գործողություն 8.** «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ընթացակարգեր:
**Գործողություն 8-ի արդյունք.** վարչական դատարանի ծանրաբեռնվածության թեթևացում:

**Գործողություն 9.** Վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետ մեխանիզմների ներդնում:
**Գործողություն 9-ի արդյունք.** վարչական բողոքարկման ընթացակարգերի կատարելագործում:

**Գործողություն 10.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունում:
**Գործողություն 10-ի արդյունք.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ ինստիտուցիոնալ և համապարփակ օրենսդրության առկայություն:

| Գործողություն | Պատասխանատու մարմին | Ելակետային դրություն | Թիրախն ըստ փուլերի | Ստուգման միջոց | Ակնկալվող արդյունք | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|

| | | | 2020թվականի 1-ին կիսամյակ | 2020 թվականի 2-րդ կիսամյակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով Վճռաբեկ դատարանի վարչական պալատ: | ՀՀ արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | Վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսևորումը: Մինչդեռ, Վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերը ներկայումս վերանայվում են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ստեղծման նախադրյալների ապահովում : | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | վարչական պալատի կողմից: | | | | | |
| ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ: | ՀՀ արդարադատության նախարարություն, Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը մնացել է չլուծված և դատական պրակտիկայում ստանում է իրարամերժ մեկնաբանություններ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով կարգավորվել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | անգործությա ն վիճարկման ընդդատությ ան հարցը: | |
| ՀՀ վարչական դատավարությ ան օրենսգրքում կատարել փոփոխություն ներ՝ ներդնելով ծանուցումների նոր ընթացակարգե ր: | ՀՀ արդարադատությ ան նախարարություն, ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամ բ): | Վարչական դատավարությունում ծանուցումների գործող համակարգի պարագայում դատարանը պարտավոր է յուրաքանչյուր գործով յուրաքանչյուր դատավարական գործողության մասին հիմնականում փոստի միջոցով ծանուցել դատավարության մասնակցին: Ընդ որում, որևէ տարբերակում չի դրվում, թե դատավարության մասնակիցը ֆիզի-կական կամ իրավաբանական անձ է, փաստաբան է, թե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին: Բոլոր դեպքերում, դատարանը փաստացի մեծ չափերի | Վարչական դատավարությունում ծանուցումների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություննն իրականացվել է, մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարությ ան օրենսգրքում փոփոխություն ներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարու թյան օրենսգրքում փոփոխությու ններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով ամրագրվել են վարչական դատավարու թյունում ծանուցման նոր ընթացակար գեր: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ֆինանսական և մարդկային ռեսուրսներ է ծախսում օրենսդրության պա-հանջը կատարելու համար: | | | | | |
| ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով գրավոր և պարզեցված նոր վարույթներ: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | Վարչական դատավարությունում բացակայում են գրավոր և պարզեցված վարույթները ինչը ևս նպաստում է վարչական դատարանի գերծանրաբեռնվածությանը: | Վարչական դատավարությունում պարզեցված և գրավոր ընթացակարգերի վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություննիրականացվել է, մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով ամրագրվել են գրավոր և պարզեցված վարույթներ: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և <<Պետական | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ բարձրագույն | Ներկայումս անձինք ազատված են հարկադիր կատարողների գործողությունները | Մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում | ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| տուրքի մասին>> օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով հարկադիր կատարողների գործողությունները բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականություն: | դատական խորհուրդ (համաձայնությամբ): | բողոքարկելու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով պետական տուրք վճարելու պարտականությունից:<br>Ստացվում է, որ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը կազմող գրեթե բոլոր գործերով հայցվորները ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից: | կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: | և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ: | փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: | փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով սահմանվել է պետական տուրք վճարելու պարտականություն: | |
| ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում | ՀՀ արդարադատության նախարարություն, | ՀՀ վարչական դատավարության հատուկ վարույթների շարքին է դասվել | Մշակվել է «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում | «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ | «ՀՀ վարչական դատավարության | «ՀՀ վարչական դատավարության | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| կատարել փոփոխություն ներ՝ վերանայելով հատուկ վարույթների տեսակները: | ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը, ինչն անհրաժեշտ է հանել օրենսգրքից, քանի որ այն հանդիսանում է վարչական մարմնի գործառույթ: Ներկայումս վարչական դատավարության օրենսգրքում առանձնացվել են վարույթներ, որոնց հատուկ վարույթի կարգով քննելու անհրաժեշտությունը հիմնավորված չէ: Ավելին, դրանցից շատերը չեն կարող համարվել հատուկ վարույթներ, քանի որ դրանցում առկա են հակադիր շահերով օժտված կողմերի և նյութաիրավական պահանջներ: | փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ: | օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով կարգավորվել են վարչական դատավարությունում հատուկ վարույթները: | |
| «Վարչարարության հիմունքների և | ՀՀ արդարադատության | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի | «Վարչարարության հիմունքների և վարչական | «Վարչարարության հիմունքների և | Վարչական մարմինների և նրանց | Օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| վարչական վարույթի մասին» օրենքում և Վարչական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով վարչական մարմինների և նրանց գործողությունների վիճարկման շրջանակը | նախարարություն, ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ): | մասին» օրենքի 3-րդ հոդվածը նախատեսում է վարչական մարմին հանդիսացող մարմինների շրջանակը, սակայն դրանցում ներառված չեն հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունները: Մինչդեռ, անհրաժեշտ է դիտարկել այդ կազմակերպություններ ի գործունեության արդյունքում կայացվող ակտերի՝ վարչարարության հետևանք հանդիսանալը, և այդ կազմակերպություններ ին վարչական մարմինների շարքում ընդգրկելը: Այդպիսով, հնարավորություն տալով անձանց վարչական դատավարության կարգով վիճարկելու հանրային ծառայության ոլորտում գործող | մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակվել են, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: | վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ: | վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: | գործողությունների վիճարկման շրջանակի ընդլայնումը | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կազմակերպություններ ի գործողությունները: Բացի այդ, հարկ է նշել, որ Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակների ուսումնասիրությունից բխում է, որ անձը սահմանափակված է հստակ պայմանների առկայության դեպքում միայն վարչական դատարան դիմելու: Մասնավորապես, վարչական հայց ներկայացնելու իրավունքի իրացումը առկախված է վարչական կամ ռեալ ակտի գոյության հետ: Մինչդեռ, կարող են լինել դեպքեր, երբ ռեալ կամ վարչական ակտ դեռևս չի ընդունվել, սակայն վարչական վարույթի ընթացքում ընթացքում իրականացվող գործողությունները ոչ իրավաչափ են և հանգեցնեն անձի իրավունքների | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | խախտման: Նման դեպքերում անհրաժեշտ է դիտարկել վարչական վարույթի ընթացիկ փուլում վարչական մարմնի վերոնշյալ գործողությունների վիճարկման հնարավորության նախատեսումը: | | | | | |
| «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ սահմանելով վարչական ակտերի պարտադիր բողոքարկման ընթացակարգեր: | ՀՀ արդարադատության նախարարություն | Վարչական ակտերի վարչական կարգով բողոքարկման անարդյունավետությունը հանգեցրել է ՀՀ վարչական դատարանի ծանրաբեռնվածության: | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը<br><br>մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը<br><br>հավանության է արժանացել ՀՀ կառավարու-թյան կողմից և ներկայացվել է ԱԺ: | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը<br><br>մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը<br><br>ներկայացվել է ՀՀ ԱԺ և նախատեսում է վարչական կարգով պարտադիր բողոքարկմա | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ն դեպքերի սահմանում: | |
| «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ: | ՀՀ արդարա-դատության նախարարություն | 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 50-րդ հոդվածով ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորումը պահանջում է վարչական վարույթի և մասնավորապես վարչական ակտերի բողոքարկման ընթացակարգերի կատարելագործում: Վարչական ակտերի բողոքարկման արդյունավետության բարձրացման և պատշաճ վարչարարության իրավունքի երաշխավորման տեսանկյունից կարևորվում է բողոքարկման գործընթացում մասնագիտական և այլ ռեսուրսների | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարու-թյան կողմից և ներկայացվել է ԱԺ: | «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և նախատեսում է վարչական կարգով պարտադիր բողոքարկման դեպքերի սահմանում և վերադասության կարգով վարչական ակտի բողոքարկման արդյունավետ | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կենտրոնացումը և արդյունավետ օգտագործումը, վարչական ակտերի վերանայման ընթացակարգերում անաչառության և հարցի օբյեկտիվ քննության երաշխիքների ապահովումը: Այս համատեքստում անհրաժեշտ է նախատեսել վարչական ակտերի բողոքարկման գործուն մեխանիզմներ: | | | | մեխանընթացակարգեր: | |
| Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունում: | ՀՀ արդարադատության նախարարություն | Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է դեռևս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված և 1986թ. հունիսի 6-ին կիրառության մեջ դրված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը: Այդ օրենսգիրքն իր հիմքում դրված հայեցակարգային տրամաբանությամբ և | Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարու-թյան կողմից և ներկայացվել է ԱԺ: | Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և նախատեսում է վարչական իրավախախտումների ոլորտում խնդիրների կարգավորում: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | փիլիսոփայությամբ, համակարգային կառուցվածքով և տասնյակ այլ օրենքների հետ ունեցած անլուծելի հակասություններով,տասնամյակների ընթացքում կատարված բազում հաջողված և անհաջող փոփոխություններով, հնացած կամ գործնական կիրառում չունեցող բազմաթիվ դրույթներով, թերի և ոչ լիարժեք վարչական պատասխանատվության միջոցներով ունակ չէ լուծել իր առջև դրված խնդիրները և չի համապատասխանում իրավական պետության պահանջներին:<br>Բացի այդ, վարչական տույժը պետք է կիրառվի անձի մոտ իրավաչափ վարքագիծ ձևավորելու և նոր վարչական իրավախախտումների կատարումը կանխելու նպատակներով:<br>Մինչդեռ, պրակտիկան ցույց է տալիս, որ ոչ միայն տուգանքի | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կիրառումը, այլև տուգանքի չափի բարձրացումը չի կարող զսպող գործոն հանդիսանալ և կանխարգելել նոր իրավախախտումների կատարումը: | | | | | |

**Նպատակ 14.** Սնանկության համակարգի արդյունավետության բարձրացում

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Սնանկության կառավարիչների մասնագիտության ձեռք բերման, որակավորման, նշանակման ընթացակարգերի բարելավում, պատասխանատվության և գործունեության արդյունավետության բարձրացման գործիքակազմի ներդնում
- Սնանկության վարույթում պարտապանի գույքի գույքագրմանը, գնահատմանը և վաճառքին վերաբերող կարգավորումների վերանայում և կատարելագործում
- Սնանկության վարույթում պարտատերերի, դատավորների (դատարանի) դերակատարման բարձրացում

**Գործողություն 1.** Ընդունել սնանկության կառավարիչների որակավորման իրականացման կարգ սահմանող նախարարի նորմատիվ իրավական ակտ:

**Գործողություն 1-ի արդյունք.** Բարձրացել է սնանկության կառավարիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը, զարգացել են նրանց կարողությունները, հմտությունները, երաշխավորում է սնանկության գործերի արդարացի բաշխումը սնանկության կառավարիչների միջև, ամրապնդվել է կառավարիչների անկախությունը և բարձրացել է վերջիններիս պատասխանատվությունը:

**Գործողություն 2.** Նախաձեռնել «Սնանկության մասին» օրենքի գիտագործնական մեկնաբանությունների, ձեռնարկների և (կամ) ուղեցույցների մշակում:

**Գործողություն 2-ի արդյունք.** Շահագրգիռ անձինք ունեն վստահելի աղբյուրներ՝սնանկության վարույթի վերաբերյալ գիտելիքներ ձեռքբերելու և ծագած գործնական խնդիրներին լուծում տալու համար:

**Գործողություն 3.** Բարելավել սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը:

**Գործողություն 3-ի արդյունք.** Բարելավվել է ուսումնական նյութերի արդիականությունը, բազմազանությունը և որակը:

**Գործողություն 4.** Մշակել գույքի հայտարարագրման ձևանմուշներ, ներդնել գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ:
**Գործողություն 4-ի արդյունք.** Հստակեցվել և առավել թափանցիկ է դարձել պարտապանի գույքի գույքագրման, գնահատման և վաճառքի գործընթացը:

**Գործողություն 5.** Մշակել սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծ

**Գործողություն 5-ի արդյունք.** Կանոնակարգվել են սնանկության վարույթում պարտապանի գույքի վաճառքի հետ կապված հարաբերությունները, վաճառքի գործընթացն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

**Գործողություն 6.** Վերանայել սնանկության դատավորների վերապատրաստման ծրագրերը:

**Գործողություն 6-ի արդյունք.** Իրավական հարցերի վերաբերյալ վերապատրաստումից բացի, իրականացվում են սնանկության դատավորների վերապատրաստումներ նաև ոչ իրավական թեմաներով, ինչպիսիք են՝ տնտեսագիտությունը, բիզնեսը, ֆինանսները, ֆինանսների կառավարումը:

| **Գործողություն** | **Պատասխա-նատումարմին** | **Ելակետային դրություն** | **Թիրախնըստփուլերի** | **Ստուգմանմիջոց** | **Արդյունք** | |
|---|---|---|---|---|---|---|

| | | | 2020 թվականի 1-ին կիսամյակ | 2020 թվականի 2-րդ կիսամյակ | | | Ֆինանսավորմանաղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդունել սնանկության կառավարիչների որակավորման իրականացման կարգ սահմանող նախարարի նորմատիվ իրավական ակտ: | ՀՀ արդարադատության նախարարություն | Հստակեցված չեն կարգավորումները որակավորման հանձնաժողովի կարգավիճակի, հանձնաժողովի կազմի, որակավորման քննության կազմակերպման մանրամասների և դրանց ներկայացվող պահանջների վերաբերյալ: | Նորմատիվ իրավական ակտի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել է: | Նորմատիվ իրավական ակտն ընդունվել է: | Սնանկության կառավարիչների որակավորման նոր կարգը ընդունվել է և գործում է: | Վերանայվել են սնանկության կառավարիչների որակավորման ընթացակարգերը: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| Նախաձեռնել «Սնանկության մասին» օրենքի գիտագործնական մեկնաբանությունների, ձեռնարկների և (կամ) ուղեցույցների մշակում: | ՀՀ արդարադատության նախարարություն, բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայն-ությամբ), Սնանկության դատարան (համաձայն-ությամբ): | Առկա չեն սնանկության վարույթին վերաբերող հայերեն լեզվով արդի և համապարփակ փաստաթղթեր, որոնք կներառեն սնանկության վերաբերյալ օրենսդրության և սնանկության վարույթի ողջ | Աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում, համապատասխան մասնագետների ներգրավում, աշխատությունների հիմնական ուղղությունների նախանշում: | Նախանշված ուղղությունների հիման վրա համապատասխան աղբյուրների, աշխատությունների մշակում, խմբագրական աշխատանքների կազմակերպում, աշխատանքնե | Կազմվել և հրապարակվել են «Սնանկության մասին» օրենքի գիտագործնական մեկնաբանությունների, ձեռնարկներ և (կամ) ուղեցույցներ: | Շահագրգիռ անձինք ունեն վստահելի աղբյուրներ՝ սնանկության վարույթի վերաբերյալ գիտելիքներ ձեռքբերելու և ծագած գործնական խնդիրներին լուծում | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | վերլուծությունը և կներկայացնեն օրենքի մատչելի մեկնաբանություններ՝ հաշվի առնելով դատական պրակտիկան և դատավարագիտական մոտեցումները, վարույթի առանձնահատկությունները և գործնական խնդիրները: | | րի փորձաքննություն, ամփոփում, հրապարակում: | | տալու համար: | |
| Բարելավել սնանկության կառավարիչների վերապատրաստման ծրագրերը: | ՀՀ արդարադատության նախարարություն, սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություններ (համաձայնությամբ) | Վերապատրաստման դասընթացներն իրականացվում են ըստ «Սնանկության մասին» օրենքի դրույթների, առկա չեն դասընթացներ ըստ առանձին ոլորտների և ինստիտուտների և դատական պրակտիկայի հաշվառմամբ: | Աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում, համապատասխան մասնագետների ներգրավում, վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղությունների նախագծում: | Նախանշված ուղղությունների հիման վրա ուսումնասիրությունների իրականացում, վերապատրաստման նոր ծրագրերի մշակում (ծրագրերի արդիականացում), քննարկում, ամփոփում և հաստատում: | Կազմվել և հաստատվել են սնանկության կառավարիչների վերապատրաստման նոր ծրագրեր: | Բարելավվել է ուսումնական նյութերի արդիականությունը, բազմազանությունը և որակը: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մշակել գույքի հայտարարագրման ձևանմուշներ, ներդնել գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ | ՀՀ արդարադատության նախարարություն | Ներկայում սնանկության կառավարչի կողմից պարտապանի գույքի գույքագրման և գնահատման գործընթացները համապարփակ կարգավորված չեն, ինչը սնանկության կառավարչին տալիս է լայն հայեցողություն դրսևորելու հնարավորություն: | «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: | «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | Ներդրվել են գույքագրման և գնահատման հստակ չափանիշներ, պարզ և հստակ ընթացակարգեր, գույքագրման և գնահատման գործընթացի նկատմամբ վերահսկողական մեխանիզմներ: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| Մշակել սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանող Կառավարության որոշման նախագիծ | ՀՀ արդարադատության նախարարություն | Սնանկության վարույթում գույքի վաճառքի իրականացման ընթացակարգը սահմանող իրավական ակտ առկա չէ: | Կառավարության որոշման նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Կառավարության որոշումն ընդունվել է: | Սնանկության վարույթում պարտապանի գույքի վաճառքի իրականացման կարգը ընդունվել է և գործում է: | Կանոնակարգվել են սնանկության վարույթում պարտապանի գույքի վաճառքի հետ կապված հարաբերությունները: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Վերանայել սնանկության դատավորների վերապատրաստման ծրագրերը: | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)<br><br>Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ) | Սնանկության դատավորների վերապատրաստման առարկաները ենթակա են ընդլայնման՝ ներառելով նաև ոչ իրավական բնույթի թեմաներ: | Աշխատանքների իրականացման ժամանակացույցի կազմում, համապատասխան մասնագետների ներգրավում, վերապատրաստման ծրագրերի հիմնական ուղղությունների նախագծում: | Նախանշված ուղղություններ ի հիման վրա ուսումնասիրությունների իրականացում, վերապատրաստման նոր ծրագրերի մշակում (ծրագրերի արդիականացում), քննարկում, ամփոփում և հաստատում: | Կազմվել և հաստատվել են դատավորների վերապատրաստման նոր ծրագրեր: | Իրավական հարցերի վերաբերյալ վերապատրաստումից բացի, իրականացվում են սնանկության դատավորների վերապատրաստումներ նաև ոչ իրավական թեմաներով, ինչպիսիք են՝ տնտեսագիտությունը, բիզնեսը, ֆինանսները, ֆինանսների կառավարումը: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

**Նպատակ 15**. Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում

**Ռազմավարական ուղղություն՝**
Արբիտրաժային օրենսդրության կատարելագործում

**Գործողություն 1.** Մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ
**Գործողություն 1-ի արդյունք.** Արբիտրաժին դիմող անձանց իրավունքներն առավել պաշտպանված են, առկա են ներդրումների պաշտպանության խթանմանն ուղղված՝ ներպետական դատարանների կողմից արբիտրաժին աջակցություն ցուցաբերելուն ուղղված կարգավորումներ:

| Գործողություն | Պատասխա-նատումարմին | Ելակետային դրություն | Թիրախնըստփուլերի | | Ստուգման միջոց | Արդյունք | Ֆինանսավորմանաղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2020 թվականի 1-ին կիսամյակ | 2020թվականի 2-րդ կիսամյակ | | | |
| Մշակել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ | ՀՀ արդարադատության նախարարություն | Օրենսդրական կարգավորման պետք է ենթարկվեն ինստիտուցիոնալ արիբտրաժների (արբիտրաժային կենտրոնների) գործունեությունը, վերանայվեն ներպետական դատարանների կողմից արբիտրաժին աջակցություն ցուցաբերելուն ուղղված կարգավորումները,<br>կատարելագործել արբիտրաժային գործընթացի անկախությունն ու ճկունությունը կարգավորող դրույթները, այդ թվում՝ | Օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | Օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարու-թյան կողմից: | Օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | Կարգավորվել են ինստիտուցիոնալ արիբտրաժների (արբիտրաժային կենտրոնների) գործունեությունը, վերանայվելեն ներպետական դատարանների կողմից արբիտրաժին աջակցություն ցուցաբերելուն ուղղված կարգավորումները: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընթացակարգի և կիրառվելիք օրենքի ընտրության տեսանկյունից | | | | | |

**Նպատակ 17. Փաստաբանական համակարգի արդյունավետության բարձրացում**

**Ռազմավարական ուղղություններ՝**

- Անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնում
- Անվճարիրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային կառուցակարգերի զարգացում
- Հանրային պաշտպանների գործունեության արդյունավետության բարձրացում
- Փաստաբանական դպրոցի գործունեության զարգացում
- Փաստաբանի վարքագծի և բարեվարքության կանոնների կատարելագործում
- Փաստաբանների պալատի ներքին կառուցակարգերի զարգացում

**Գործողություն 1.**«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը:
**Գործողություն 1-իարդյունք**. Ընդլայնվել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ինչպես նաև վերանայվել է գույքային պահանջների գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար նախատեսված գումարային սահմանափակման շեմը

**Գործողություն 2.** «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգը:
**Գործողություն 2-ի արդյունք.** Ներդրվել և գործում է pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգը

**Գործողություն 3.** Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում:
**Գործողություն 3-ի արդյունք**. Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության թեթևացում, հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխում

**Գործողություն 4.**Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման կատարելագործված կարգերի ներդնում:

**Գործողություն 4-ի արդյունք**. Ներդրվել են Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբանների մասնագիտական վերապատրաստման արդիականացված ծրագրեր, որակավորման քննություններն անցկացնելու պարզությունը, օբյեկտիվությունն ու թափանցիկությունն ապահովող կառուցակարգեր

**Գործողություն 5**. Փաստաբանների պալատի հետ համագործակցությամբ բարելավել փաստաբանների վարքագծի կանոնները:
**Գործողություն 5-ի արդյունք.** Փաստաբանների վարքագծի կանոնները բարելավված են

**Գործողություն 6**.«Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով Փաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր:
**Գործողություն 6-ի արդյունք.** Ներդրվել ենՓաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր

| Գործողություն | Պատասխանատու մարմին | Ելակետային դրություն | Թիրախն ըստ փուլերի | | Ստուգման միջոց | Ակնկալվող արդյունք | Ֆինանսավորման աղբյուր |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2019 թվականի 2-րդ կիսամյակ | 2020 թվականի 1-ին կիսամյակ | | | |
| «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ): | Անվճար իրավաբանական օգնություն ստանալու անձանց շրջանակում ներառված չեն օտարերկրացիները՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար, այն անձինք, ում վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով ընդլայնվել է անվճար իրավաբանական | ՀՀ պետական բյուջե (40 մլն դրամ), օրենքով չարգելված աղբյուրներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումնե րը վերացնելու գործերի վարույթ, ինչպես նաև տուժողները և վկաները, եթե վերջիններս պարտադիր ժամկետային զինծառայող են կամ երեխա: Բացի այդ, գույքային (գումարի) պահանջով գործերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը սահմանափակված է, եթե գույքային (գումարի) պահանջով գործը գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: | | | | օգնության շահառունե րի շրջանակը: | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով pro-bono իրավաբանական ծառայությունների արդյունավետ կառուցակարգը: | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ): | «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսված չեն անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային կառուցակարգեր: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով ամրագրվել են pro-bono իրավաբանական ծառայությունների կառուցակարգեր: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| **Գործողություն** | **Պատասխանատու մարմին** | **Ելակետային դրություն** | **Թիրախն ըստ փուլերի** | | **Ստուգման միջոց** | **Ակնկալվող արդյունք** | **Ֆինանսավորման աղբյուր** |
| | | | **2020 թվականի 1-ին կիսամյակ** | **2020 թվականի 2-րդ կիսամյակ** | | | |
| Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ փաստաբանների | Անընդհատ աճող գործերի թվի համեմատ հանրային պաշտպանների անհամեմատ ցածր թիվ, ինչպես նաև | Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության և հանրային պաշտպանի գրասենյակի | Համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծը հավանության է արժանացել ՀՀ | Համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծը մշակված է և | Համապատասխան օրենսդրական փոփոխությունների | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրության իրականացում, ուսումնասիրության արդյունքներով համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում: | պալատ (համաձայնությամբ): | հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների ոչ բավարար լինելը: | ենթակառուցվածքների բարեփոխման վերաբերյալ համապարփակ ուսումնասիրությունն իրականացվել է, մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծ, նախագիծը սահմանված կարգով շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | կառավարության կողմից: | ներկայացվել է ՀՀ ԱԺ: | նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանով ռագրվել են հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության թեթևացմանն ու հանրային պաշտպանի գրասենյակի ենթակառուցվածքների բարեփոխմանն ուղղված իրավակարգավորումներ: | |
| Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, որակավորման քննության և փաստաբաններ | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ փաստաբանների պալատ | Փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար գործնական նշանակություն ու կարևորություն ունեցող հմտությունների և | Առաջադեմ փորձի ուսումնասիրության հիման վրա Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, փաստաբանների | Փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցման, փաստաբանների մասնագիտական վերապատրաստմա | Ուսուցման և վերապատրաստման ծրագրերի կառուցվածքը, բովանդակությունը և ճնաչափն արդիականացված են, որակավորման | Ներդրվել և գործում են Փաստաբանական դպրոցի ունկնդիրների և փաստաբա | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ի մասնագիտական վերապատրաստման կատարելագործված կարգերի ներդնում: | (համաձայնությամբ): | ունակությունների դասավանդման, փաստաբանների վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև օբյեկտիվության և պարզության տեսանկյունից որակավորման գործընթացի ոչ բավարար մակարդակը: | մասնագիտական վերապատրաստման կարիքների գնահատում, որակավորման քննության կատարելագործված կարգերի մշակում: | ն արդիականացված ծրագրերի, ինչպես նաև որակավորման քննության կատարելագործված կարգերի ներդնում: | քննությունների անցկացման կարգերը կատարելագործված են: | ների վերապատրաստման արդիականացված ծրագրեր, որակավորման գործընթացի կատարելագործված կարգեր: | |
| Փաստաբանների պալատի հետ համագործակցությամբ բարելավել փաստաբանի վարքագծի կանոնները | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ): | Փաստաբանների վարքագծի և բարեվարքության կատարելագործման անհրաժեշտությունը: | Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը մշակվել է և դրվել քննարկման: | Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը հաստատվել է Փաստաբանների պալատի կողմից: | Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը հաստատվել է Փաստաբանների պալատի կողմից: | Փաստաբանի վարքագծի կանոնների բարելավման նախագիծը հաստատվել է Փաստաբանների պալատի կողմից: | Օրենքով չարգելված աղբյուրներ: |
| «Փաստաբանության մասին» օրենքում կատարել փոփոխություններ՝ ներդնելով Փաստաբանների պալատի | ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ փաստաբանների պալատ | Փաստաբանների պալատի ինքնակառավարման ոչ բավարար մակարդակը: | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակվել է, սահմանված կարգով | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը հավանության է | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը | «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» | Օրենքով չարգելված աղբյուրներ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ինքնակառավարման գործուն կառուցակարգեր: | (համաձայնությամբ): | | շրջանառվել է և ուղարկվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: | արժանացել ՀՀ կառավարության կողմից: | մշակված է և ներկայացվել է ՀՀ ԱԺ: | օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ ԱԺ և դրանովներ դրվել են Փաստաբանների պալատի ինքնակառավարման գործուն կառուցակարգեր: | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ